

կը յիշուի նաեւ, իբր այր անուանի, Տեղբիկցի Աստուածատուր Պելլուլճի կոչուածը՝ հանճարեղ ու քաղցրաբարոյ՝ որ բարձրագոյն Գրան մեծամեծներուն և Գրիգոր Պարոն — տէր Երուսաղէմի պատրիարքին սիրելին էր: Մեծ գոռարուծիւններէ ու ներքին հակառակութիւններէ ետեւ՝ յաջողեցաւ շինել վերոյիշեալ պատրիարքին հետ Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցին, (Ժամանակագրական պատմ. Երուսաղէմի առջ. 1890 չափ. Ա. էջ 508): Կար 1844-49ին Տիարպէքերցի Մադաթիա Չելէպի մը, որ սիրելին էր Մեծ Եպարքոս Մէլէք Աճմէտ փաշայի և կատարեց յիշատակութեան արժանի գործեր, զոր կը ղովէ Երիմիա Չելէպին ալ:

Պատմութիւնը կը յիշէ նաեւ՝ նախնական մեծատուն Իսքէնտէր Չելէպին, որ բարեկամ ալ էր Կղեմէս Գալանոս բժիշկ — կրօնաւոր մատենագիրին, և հիւրընկալեց զայն՝ ժամանակին կրօնական հակառակութեանց ատեն: Իսքէնտէրի Չելէպի մակդիրը՝ կենթադրէ արդէն իր վրայ բաւական ֆրանկո-թիւն՝ ժամանակին բացօրոյ և բացօրոյ բառովը: Կայ իրեն ժամանակակից խորքերցի Ռըստակէս անուն երեւելի մըն ալ, որ իր հարստութեամբն և ազդեցութեամբ բաւական օգտակար եղած է իր ժամանակակիցներուն 1:

Գարձեալ պատմութիւնն առաջին անգամ 1647ին կը յիշատակէ՝ հայ մեծամեծներու պատուիրակ երթալն Էջմիածին, Պոլիսի կրօնական երկպառակութեանց համար հայցելու Փիլիպպոս կաթողիկոսին խաղաղական միջամտութիւնը: Նաեւ Վանցի Ռուհիջան հօճան (մեծ եպարքոսին հայ քիւրճիպաշին) իբրեւ պետ կրօնապատրիարքական կուսակցութեան մը ու գործակից պատրիարքական տեղակալներու նոյնպէս խոճա Ատովմեանք և Չերաք Գերաքեանք?։ Այլ աշխարհա-

1. Երեմիա Չելէպի՝ առ չ. Ղուկաս Իմմիճիանի. Աշխարհ, Երոսպա. չափ. Ե, էջ 129-130, նաեւ ծածոթութեամբ մէջ:

2. Հաւանաբար աստուց սերունդէն ըլլալու է Չուրայեցի Պայծառ Իշխան Աղայ Յօհաննան Գերաքեան՝ բնակեալ ի Հնդկիս, ի Սուրաթ, որոյ ծախքովը